ՀՈՐԲԱՏԵՂ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արթուր Քարամյան
Հեռախոս՝ +374. 93.004916

Հորբատեղ գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի շրջանում՝ Եղեգնաձոր-Վարդենյաց լեռնանցք մայրուղու հյուսիս-արևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 23 կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 12 կմ: Սահմանակից է Արտաբույնք, Շատին, Եղեգիս, Սալլի գյուղական բնակավայրերին: Գտնվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային և երաշտի տարիները: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին:
Գյուղի քիչ վերև պահպանվել են Սբ. Հրեշտակապետաց եկեղեցին (1692 թ.) և XIII-XIV դարերի խաչքարեր:

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:
Գյուղում գործում է հիմնական դպրոց, բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Հորբատեղ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 28 հուշարձան: